ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

8 Նոյեմբերի ուրբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

155
(3005)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

30 ՕՐ՝ ԿԱՇԱՌՔԻ ԳՈՐԾԸ «ՄՈՌԱՑՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ» ՀԱՄԱՐ

ՀՀ գլխավոր դատախազությունն ուղիներ է որոնում ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանին կոռուպցիոն գործից «մաքրելու» համար:

«Ժողովուրդ» օրաթերթը գրավոր հարցում էր ուղարկել ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին՝ հետեւյալ հարցադրումներով.

- ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանին կաշառք փոխանցելու գործով ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մեղադրանք է առաջադրված քաղաքացի Աշոտի նկատմամբ: Ինչո՞ւ է մինչ օրս ենթադրյալ կաշառք վերցնողը՝ Հովիկ Աղազարյանը, որպես վկա ներգրավված գործում:

- Ե՞րբ եք պատրաստվում ՀՀ Ազգային ժողով մտնել՝ Հովիկ Աղազարյանին պատգամավորական անձեռնմխելիությունից զրկելու եւ նրա նկատմամբ մեղադրանք առաջադրելու հարցով:

- Եթե գործը վերոնշյալ ելքը չի ունենալու, ապա կա՞ն արդյոք նախադրյալներ, իրավական հիմնավորումներ՝ Աղազարյանի վերաբերյալ գործը կարճելու համար:

Այս պարզ, տրամաբանական հարցադրումներին պատասխանելու համար ՀՀ Գլխավոր դատախազությունը 30 օր ժամանակ է խնդրել:

Ի՞նչ պետք է տեղի ունենա 30 օրում:

ՔՊ-ն 2026 թվականի ընտրություններից առաջ նոր փոփոխություններ է կատարում ՀՀ ընտրական օրենսգրքում՝ ապահովագրելով իրեն հետագա խնդիրներից: Այսպիսով՝ ԸՕ նոր փոփոխություններով իշխանությունները հնարավորություն են ստեղծում արտակարգ կամ ռազմական դրություն հայտարարելու միջոցով չեղարկելու ընտրության արդյունքները եւ նոր ընտրություն նշանակելու քվեարկության նախնական արդյունքների պահին, եթե ստացված արդյունքներն իրենց «սրտով» չլինեն: Առաջին ընթերցմամբ ընդունված նախագծում նշվում է. «Եթե ռազմական կամ արտակարգ դրությունը հայտարարվել է Ազգային ժողովի կամ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների քվեարկության նախնական արդյունքները ամփոփելու եւ դրանք արձանագրությամբ վավերացնելու պահից հետո մինչեւ համապատասխանաբար՝ նորընտիր Ազգային ժողովի կազմավորումը, ավագանու ձեւավորումը, կամ մեծամասնական ընտրակարգով ընտրությունների արդյունքները մարզպետին ներկայացնելը, ապա ռազմական կամ արտակարգ դրություն հայտարարվելու պահից ընտրական գործընթացն իրավունքի ուժով համարվում է կասեցված՝ բացառությամբ սույն հոդվածով նախատեսված՝ ընտրությունների քվեարկության նախնական արդյունքները ամփոփելու եւ դրանք արձանագրությամբ վավերացնելու պահին հաջորդող ընտրական գործընթացի փուլերին վերաբերող առանձնահատուկ դեպքերի»: Այսինքն՝ ստացվում է, կարող են ընտրություններն անցկացվել, հետո եթե դրա արդյունքները գոհացուցիչ չլինեն, դրանք կչեղարկվեն եւ նոր ընտրություններ կանցկացվեն: ՔՊ-ականները տարբեր մեթոդներով երաշխիքներ են ստեղծում իրենց հետագա վերարտադրման համար ու նախապես ապահովագրում են իրենք իրենց, որպեսզի եթե ընտրությունների արդյունքներն իրենց ուզածով չլինեն, ապա չիրապարակվեն: Շատ «ժողովրդավար» մոտեցում է:

Ո՞վ է դատախազությունում Սրբուհի Գալյանից հետո ցանկանում համակարգել ապօրինի ծագման գույքի բռնագանձման ոլորտը: «Ժողովուրդ» օրաթերթը, ՀՀ Գլխավոր դատախազությունում տարածված տեղեկությունները ի մի բերելով, պարզեց, որ հավանական թեկնածուի անունը արդեն կա: Ինչպես հայտնի է, հոկտեմբերի 29-ին իշխող ուժը արդարադատության նախարարի մեկ ամսվա փնտրտուքներից հետո ի վերջո կանգ առավ գլխավոր դատախազի տեղակալ Սրբուհի Գալյանի թեկնածության վրա. «Քաղաքացիական պայմանագրի» վարչության՝ հոկտեմբերի 29-ի նիստում Գալյանի թեկնածությունը հաստատվել էր, եւ նա նոյեմբերի 5-ին նշանակվեց նախարար: Գալյանի հեռանալուց հետո Գլխավոր դատախազությունում «առեղծվածային» ազատում եղավ. մասնավորապես, ՀՀ գլխավոր դատախազի օգնական Արեւիկ Ավոյանն ազատվեց պաշտոնից: Հրամանը նոյեմբերի 4-ին ստորագրել է Գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը: Ավոյանն ավելի վաղ զբաղեցրել է կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալի պաշտոնը: Ըստ դատախազությունում տարածված լուրերի՝ նրա ազատումը պատահական չի եղել: Գլխավոր դատախազի նախկին օգնականը ցանկություն է հայտնել առաջադրել իր թեկնածությունը ապօրինի ծագման գույքի բռնագանձման ոլորտը համակարգելու: Հավանաբար հենց նա էլ կընտրվի:



COP29-ին ընդառաջ հայ գերիների վերադարձը սպասված, գուցե նաեւ բաղձալի է, սակայն նրանց հետ Հայաստան չեն վերադառնալու ռազմաքաղաքական գերիները: Ռազմաքաղաքական գերիները՝ Արցախի Հանրապետության ութ պաշտոնյաները՝ նախագահներ Արկադի Ղուկասյանը, Բակո Սահակյանը, Արայիկ Հարությունյանը, նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը, պաշտպանության բանակի նախկին հրամանատար Լեւոն Մնացականյանը, ՊԲ հրամանատարի նախկին տեղակալ Դավիթ Մանուկյանը, Ազգային ժողովի նախագահ Դավիթ Իշխանյանը, հրաժարվել են անգամ իրավաբանի կամ փաստաբանի ծառայություններից: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ նախկին արտգործնախարար Դավիթ Բաբայանը միակն է Ռուբեն Վարդանյանից հետո, ով ունի միջազգային փաստաբան: Դավիթ Բաբայանի փաստաբանը ամերիկաբնակ հայ Ջաք Հակոբ Բուռնազյանն է: Իսկ Ռուբեն Վարդանյանը ունի միջազգային հանրության մեծ աջակցությունը, սակայն այդ աջակցությունը, կարծես, մինչ այս պահը որեւէ հաջողության չի հանգեցրել: Հիշեցնենք, որ ռազմաքաղաքական գերիներից կան անձինք, որ խնդրել են ընտանիքներին կապ հաստատելու փորձեր այլեւս չանել եւ հորդորել են մոռանալ իրենց գոյության մասին:

COP29
Baku
Azerbaijan

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԶՐՈՒՅՑ

«ՏՐԱՆՍՊՈՐՏԸ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ 100 ԴՐԱՄ», ՄԱՐՈՒԹՅԱՆ

Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանը շարունակում է ստորագրահավաքը՝ ընդդեմ հունվարի 1-ից ուժի մեջ մտնող տրանսպորտի թանկացման նախագծի:

Երեկ ստորագրահավաքը իրականացվել է Հանրապետության հրապարակում:

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանի հետ: Նա հայտարարել է, որ 2 օրվա ընթացքում 6 895 ստորագրություն է հավաքել:

Ավելի վաղ հայտնել էինք, որ Երեւանի նախկին քաղաքապետ Հայկ Մարությանը ստորագրահավաք է նախաձեռնել՝ հունվարի 1-ից նախատեսված տրանսպորտի թանկացման դեմ:

Նա հայտարարել է, որ իր առաջնորդած «Նոր ուժ» կուսակցության անդամները կշրջեն Երեւանում, որպեսզի անհրաժեշտ քանակի ստորագրություններ հավաքեն՝ չեղարկելու տրանսպորտի թանկացման նախագիծը:

-Պարոն Մարության, այսօր արդեն ստորագրահավաքի երրորդ օրն է, ի՞նչ արդյունքներ եք գրանցել, եւ քանի՞ ստորագրություն է հավաքվել. որքա՞ն ստորագրություն պետք է հավաքվի, որպեսզի նախագիծը ներկայացնեք ավագանի:

-Ճիշտ եք, այսօր երրորդ օրն է, եւ առաջին երկու օրերի ընթացքում հավաքվել է գրեթե 6 800-ի հասնող ստորագրություն: Արդյունքները դրական են, ընթացքում էլ մարդիկ բավականին ակտիվորեն մասնակցում են, քանի որ սա նրանց առօրյա կյանքի մասին է: Այս իրավիճակն իրենց խանգարելու է գնալ աշխատանքի, վերադառնալ տուն, երեխաներին դպրոց ճանապարհել եւ այլն:

-Առավելագույնը որքա՞ն ստորագրություն պետք է հավաքվի:

-Առավելագույնի սահման չկա: Եթե հնարավոր լիներ բոլորին հասնել, ապա հարյուր հազարավոր ստորագրություններ կհավաքվեին, որովհետեւ մարդկանց 95 տոկոսը, բնականաբար, դեմ են այս նախաձեռնությանը:

-Պարոն Մարության, քաղաքային իշխանությունները Ձեր այս նախաձեռնությունը պոպուլիստական են համարում: Հենց Տիգրան Ավինյանը նշել է, որ Ձեր քաղաքապետ աշխատելու տարիներին, հենց Դուք եք ձեռք բերել անսարք «Գազել»-ներ, աղբահանությունը խայտառակ վիճակում է եղել, եւ հիմա Ձեր այս գործողությունները պարզապես պոպուլիզմ են: Ըստ Ձեզ, ինչո՞ւ են ստորագրահավաքն այդպես որակում:

-Յուրաքանչյուրը կարող է ասել այն, ինչ ինքն է ցանկանում: Ասելուն սահմանափակում չկա. կարեւորն այն է, թե ինչ է կատարվում, եւ ով ինչ է անում: Բնականաբար, երթուղայինների վճարը պետք է լինի 100 դրամ: Այս ռեֆորմը իմ քաղաքապետ եղած տարիներին է սկսվել: Մենք ենք բերել առաջին ավտոբուսները՝ թե՛ «Ժոնգ-թոնգ»-ները 8.6 մետրանոց, թե՛ «Ման»-երը: Իմ օրոք են բոլոր այդ պայմանագրերը կնքվել:

-Բայց ասում են նաեւ՝ «Գազել»-ներ եք ձեռք բերել:

-Եթե խոսքը 6.6 մետր երկարությամբ «Գազել» ավտոբուսների մասին է, ապա, այո՛, դա իմ քաղաքապետ լինելու ժամանակ է ձեռք բերվել, եւ դրանք շատ լավ աշխատում են: Ավագանու անդամներից մեկը՝ մեր խմբակցության ավագանու անդամ Հովսեփ Կուբաթյանը, նախորդ օրը հստակ թվերով գրել էր, թե «Գազ» գործարանի արտադրության մեքենաների եւ «Ման»-երի քանի տոկոսը միաժամանակ «դուրս չէին եկել աշխատանքի»: Տոկոսը նույնն էր՝ 10-ի շուրջ, ինչը նշանակում է, որ «Գազել»-ները իրենց գերխնդիրը կատարել են՝ լինելով անհամեմատ ավելի մատչելի:

Այն ժամանակ, երբ տրանսպորտի ճգնաժամ էր, կառավարությունը մերժեց օգտակար լինել եւ նշեց, որ համայնքը պետք է շարժվի իր ֆինանսի չափով: Եթե այդ պահին քաղաքապետարանը ունենար «Ման»-երի համար նախատեսված գումարը, ապա առաջինը դրանք կգներ. յուրաքանչյուրն արժե 250 հազար դոլար, որոնց գումարը վճարել է Կառավարությունը, ոչ թե քաղաքային իշխանությունը:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԸՆԹԱՑԻԿ

Ե՞ՐԲ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ԿՄՏՆԻ. GALLUP

GALLUP International Association-ի հայաստանյան ներկայացուցչությունը հրապարակել է հերթական հետազոտության տվյալները:

Հետազոտությունը կոչվում է «Արա չի՛, Արքա ա»:

Հարկ է նշել, որ հետազոտության ընթացքում կիրառվել է բազմաստիճան, քվոտային ընտրանք: Ընտրանքի առաջնային միավորները՝ բնակավայրերը, ընտրվել են ՀՀ բոլոր վարչական-տարածքային միավորներից՝ համամասնորեն:

Հարցազրույցներն իրականացվել են Հայաստանի 10 մարզերում եւ Երեւանի բոլոր համայնքներում՝ ՀՀ բնակչության բաշխմանը համամասնորեն: Հարցվողների հեռախոսահամարներն ընտրվել են պատահական գեներացված համարներից: Հեռախոսային հարցումների արդյունքում հարցումը կազմվել է 1100 պատասխանի հիման վրա:

Քաղաքացիներից հարցրել են, թե ի՞նչ եք կարծում, Հայաստանն Ուկրաինայից եւ Մոլդովայից ավելի շուտ Եվրամիությանն անդամակցելու շանսեր ունի՞ արդյոք:

Հարցված քաղաքացիների 52%-ը կտրուկ ոչ է պատասխանել այս երեւույթին, 15%-ը կարծում է, որ Հայաստանն ավելի շուտ կմտնի Եվրամիություն, քան Ուկրաինան կամ Մոլդովան, 13%-ն էլ չգիտի կամ դժվարանում է պատասխանել:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«ՊԱՇՏՊԱՆ ՀԱՅՐԵՆՅԱՑ»-Ը՝ ՆԱԵՎ ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐԻ ՀԱՄԱՐ

Կառավարությունը նոյեմբերի 7-ի նիստում որոշել է ԱԱԾ-ում ներդնել պարտադիր զինծառայությունից պայմանագրային զինվորական ծառայության անցման «Պաշտպան հայրենյաց» ծրագիրը: Ծրագիրը նախատեսում է շարքային եւ սպայական կազմերի պարտադիր զինծառայության առաջին 6 ամիսը լրանալուց հետո պայմանագրային զինվորական ծառայության անցնելու հնարավորություն՝ ծառայության ժամկետը սահմանելով 5 տարի, ինչպես նաեւ պայմանագրի ժամկետը լրանալու կամ առողջական վիճակի պատճառով ոչ պիտանի ճանաչվելու հիմքով ծառայությունից արձակելիս նրանց համար սահմանելով պատվովճար ստանալու իրավունք:

Ներկայումս այս կարգավորումները վերաբերում են միայն ՀՀ ՊՆ համակարգում պարտադիր ժամկետային ծառայության անցնող զինծառայողներին, ուստի այն ազգային անվտանգության մարմիններում պարտադիր զինվորական ծառայություն անցնող զինծառայողների նկատմամբ հնարավոր չէ կիրառել: Ներկայումս ԱԱԾ սահմանապահ զորքերում զգալի թվով պարտադիր ժամկետային զինծառայողներ ցանկություն են հայտնել «Պաշտպան հայրենյաց» ծրագրով անցնելու պայմանագրային զինվորական ծառայության: Վերջիններս հաճախ տեղափոխվում են ՀՀ զինված ուժեր՝ հետագա պայմանագրային ծառայությունը շարունակելու նպատակով:

Բացի այդ, Սահմանապահ զորքերը ՊՆ-ից փուլային տարբերակով ընդունելու են հայ-ադրբեջանական պետական ամբողջ սահմանի պահպանությունը, ինչի համար անհրաժեշտ է լինելու հավելյալ անձնակազմ, որը կարող է լրացվել նաեւ «Պաշտպան հայրենյաց» ծրագրի կիրառմամբ:

Նախագծով առաջարկվում է նախատեսել շարքային եւ կրտսեր ենթասպայական կազմերի պարտադիր զինծառայողներին ԱԱԾ-ում պայմանագրային զինծառայության ներգրավելու իրավակարգավորումներ:

ՄԵՍԲՈՊ ՄԵՍԲՈՊՅԱՆԸ՝ ՀԿԾՀ ՆԱԽԱԳԱՀ

Կառավարությունը հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահի պաշտոնում առաջադրեց Մեսրոպ Մեսրոպյանի թեկնածությունը: Նրա թեկնածությունը կներկայացվի ԱԺ, որն էլ կընտրի ՀԾԿՀ ղեկավարին:

Մեսրոպյանը 2019-20 թթ. եղել է ՀԾԿՀ անդամ, ապա Կոտայքի մարզպետ:

Հիշեցնենք, որ 2019 թվականից այդ պաշտոնը զբաղեցնող Գարեգին Բաղրամյանն աշխատանքից ազատվելու դիմում է ներկայացրել դեռ հոկտեմբերի 10-ին:

ԱՄՆ-Ն ՄՂՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԻՆ «ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ». ՌԴ

ԱՄՆ Պետդեպարտամենտը նկատելիորեն արագացրել է Հայաստանում քաղաքացիական հասարակության արեւմտամետ կառույցների խթանման ուղղությամբ աշխատանքը. այս մասին, ՏԱՍՍ-ի փոխանցմամբ, ասել է Ռուսաստանի արտաքին հետախուզության ծառայությունը:

Կառույցի պնդմամբ՝ Միացյալ Նահանգները ցանկանում է վերջնականապես Հայաստանը վերակողմնորոշել դեպի զարգացման արեւմտամետ ուղղություն՝ առաջնորդվելով Ուկրաինայում եւ Մոլդովայում փորձարկված սխեմաներով:

«Միացյալ Նահանգների գլխավորած այսպես կոչված քաղաքակիրթ համայնքին միանալու «բարձր նպատակին» հասնելու համար հայ ժողովուրդը, ինչպես կարծում են Վաշինգտոնում, ստիպված կլինի վճարել սեփական ավանդույթներից եւ ազգային սոցիալական հիմքերից հրաժարմամբ: Այսպիսով՝ Վաշինգտոնը համառորեն Հայաստանին մղում է դեպի ազգային «ինքնասպանություն»», - ասվում է հաղորդագրությունում:

«3+3» ՁԵՎԱՉԱՓԻ ԱԿՏԻՎԱՑՈՒՄ

Ռուսաստանն ակնկալում է, որ Հարավային Կովկասի վերաբերյալ «3+3» ձեւաչափը կակտիվացնի աշխատանքը Թուրքիայում հոկտեմբերին կայացած նախարարական հանդիպումից հետո: Այս մասին ասել է ՌԴ անվտանգության խորհրդի քարտուղար Սերգեյ Շոյգուն ԱՊՀ երկրների անվտանգության խորհուրդների քարտուղարների հանդիպման ժամանակ Մոսկվայում:

«Հարավային Կովկասում մենք արել եւ շարունակում ենք անել հնարավոր ամեն ինչ, որպեսզի ամրապնդենք «3+3» տարածաշրջանային խորհրդակցական հարթակը: Ակնկալում ենք, որ նախարարական հանդիպումից հետո այդ մեխանիզմի աշխատանքը կակտիվանա»,- ասել է նա:

ՋՐՀԵՂԵՂԻՑ ՀԵՏՈ 89 ՄԱՐԴ ԴԵՌ ԱՆՀԵՏ ԿՈՐԱԾ Է

Իսպանիայում հոկտեմբերի վերջին տեղի ունեցած աղետալի հեղեղումներից հետո 89 մարդ դեռ անհետ կորած է: Այս տվյալները նոյեմբերի 5-ի երեկոյան հրապարակել է տարերքից ամենաշատը տուժած Վալենսիայի Ինքնավար Համայնքի կառավարությունը: Այդ մասին գրում է Deutsche Welle-ն:

Պաշտոնական տվյալներով՝ Իսպանիայում ջրհեղեղը խլել է 215 մարդու կյանք, որոնցից 211-ը՝ Վալենսիայում: Սակայն 62 մարդու աճյունը դեռ չի ճանաչվել: Իշխանությունները չեն բացառում, որ դրանց թվում կարող են լինել այն անձինք, որոնց հարազատները մինչեւ այժմ փնտրում են նրանց որպես անհետ կորած:

Օդերեւութաբանական ծառայության տվյալներով՝ լույս հոկտեմբերի 30-ի գիշերը Վալենսիայի մի շարք շրջաններում 1 քառ. մ-ի վրա ավելի քան 300 լիտր անձրեւ է տեղացել: Չիվա փոքրիկ գյուղում այս ցուցանիշը կազմել է 1 քառ. մ-ի վրա 491 լիտր, որը համապատասխանում է տարածաշրջանում տեղումների տարեկան ծավալին: Ջրի ու ցեխի հզոր հոսքերը քանդել են կամուրջները եւ քշել-տարել մարդկանց, մեքենաներ եւ նույնիսկ ամբողջ տներ:

Հեղեղումների պատճառ դարձած հորդառատ անձրեւներ են տեղացել նաեւ Իսպանիայի այլ տարածաշրջաններում, այդ թվում՝ Բալեարյան կղզիներում, Անդալուսիայում, Կաստիլիա-Լա Մանչայում եւ Կատալոնիայում: Այժմ եղանակն այնտեղ զգալիորեն բարելավվել է:

ՀԱՐՎԱԾՆԵՐ ԵՆ ՀԱՍՑՎԵԼ ԲԵՅՐՈՒԹԻՆ

Իսրայելի ռազմաօդային ուժերի ինքնաթիռները մի շարք հարվածներ են հասցրել Բեյրութի հարավային արվարձանում գտնվող Հարեթ Հրեյք շրջանին:

Այս մասին հայտնում է «ՌԻԱ Նովոստի»-ի թղթակիցը:

Ըստ աղբյուրի՝ Բեյրութի հարավային արվարձաններին հասցվել է առնվազն չորս հարված, իսկ Լիբանանի մայրաքաղաքի երկնքում լսվում են ռազմական ինքնաթիռների եւ անօդաչու սարքերի ձայները:

ԹՐԱՄՓԸ ԻՐ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՉԻ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՆՈՐ ՎԱՐՉԱԿԱԶՄՈՒՄ

Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ, ի տարբերություն իր առաջին նախագահական ժամկետի, նոր վարչակազմի օրոք իր երեխաներին չի նշանակի պաշտոններում, քանի որ այդ փորձը չափազանց ցավոտ է եղել ընտանիքի համար: Այս մասին հայտնել է NBC News հեռուստաալիքը:

«Թրամփը հայտարարել է, որ իր երեխաներին չի ընդգրկելու նոր վարչակազմում, ի տարբերություն իր պաշտոնավարման առաջին ժամկետի, երբ նրա դուստր Իվանկա Թրամփը եւ փեսա Ջարեդ Քուշները առանցքային խորհրդականներ էին», - ասված է հեռուստաալիքի հաղորդագրության մեջ:

ՀՈՒՆՎԱՐԻ 10-ԻՆ ԿԼԻՆԻ ԵՐԴՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

ԻՆՉ ՍՊԱՍԵԼ ԹՐԱՄՓԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒՄԻՑ

ԱՄՆ-ում հունվարի 6-ին ավարտվեց երկրի եւ, ինչու ոչ, նաեւ ամբողջ տարածաշրջանի համար կարեւորագույն իրադարձություններից մեկը՝ նախագահական ընտրությունները:

Նախագահական ընտրություններում երկու թեկնածուներ կային՝ Քամալա Հարիսը, ով վայելում էր շատերի համակրանքն ու աջակցությունը եւ Դոնալդ Թրամփը, ով ընտրությունների մրցավազքում գերազանցելով Հարիսին՝ դարձավ բացարձակ առաջատար:

Իսկ ինչպե՞ս է սկսվել ամեն բան. գանք ամենասկզբից: ԱՄՆ-ի պատմության մեջ 60-րդ նախագահական ընտրությունները, որի ժամանակ 47-րդ նախագահ ընտրվեց Դոնալդ Թրամփը, տեղի ունեցան նոյեմբերի 5-ին: Մինչ այդ նախագահի երկու թեկնածուները իրականացրել են տարբեր քարոզարշավներ:

Ի սկզբանե համացանցում տարածված հայտարարությունների, կարծիքների եւ հրապարակումների համաձայն՝ ԱՄՆ 47-րդ նախագահի պաշտոնում պետք է լիներ Քամալա Հարիսը, սակայն վերջինս պարտվեց եւ ընդունեց իր պարտությունը:

Հարկ է նշել, որ կրկին նախագահ ընտրված Դոնալդ Թրամփը մինչ ԱՄՆ նախագահ ընտրվելը ասել էր, որ իր ընտրվելու դեպքում՝ ինքը կպաշտպանի հալածյալ քրիստոնյաներին, կաշխատի դադարեցնել էթնիկ զտումներն ու բռնությունները, անգամ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ կվերականգնի խաղաղությունը:

Թրամփին հաղթանակի առթիվ շնորհավորել են ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ԱՄՆ նախկին նախագահ Ջո Բայդենը, Թուրքիայի նախագահը, անգամ Թրամփի հակառակորդ Քամալա Հարիսը, ով Թրամփին համարում էր անվստահելի եւ վրեժի մոլուցքով տարված:

Ամեն բան կարող էր գեղեցիկ լինել, եթե չլինեին «բայց»-եր:

Բանն այն է, որ արդեն նոյեմբերի 7-ին՝ ընտրությունից մեկ օր անց, դեմոկրատական կուսակցության թեկնածու Քամալա Հարիսն ասել է, որ, այնուամենայնիվ, իրենց պարտված չեն համարում, եւ պայքարը կշարունակվի «քվեախցում, դատարաններում եւ հրապարակում» եւ այս ամենը ամենեւին էլ չի նշանակում, որ իրենք չեն հաղթի:

Նշենք, որ ԱՄՆ ընտրված նախագահ, հանրապետական Դոնալդ Թրամփի երդմնակալության արարողությունը նախատեսված է 2025 թ. հունվարի 20-ին՝ Վաշինգտոնի Կապիտոլիումի բարձունքում:

Երդմնակալության օրը նախատեսված միջոցառումների թվում են նոր նախագահի երդմնակալությունը եւ երկրի նորընտիր ղեկավարի ելույթը:

Թե ինչ է սպասվում առաջիկայում՝ առայժմ հայտնի չէ, սակայն որ թեժ է լինելու, արդեն ակնհայտ է: Միայն մնում է սպասել հետագա զարգացումներին:

ԱՆՆԱ ՍՐԿՊԻՈՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԵՏ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑ ՉԻ ՔՆՆԱՐԿՎՈՒՄ. ԱԳ ՓՈԽՆԱԽԱՐԱՐ

«Այն պահին, երբ ինքս տեղեկացել եմ նման հնարավոր ապօրինությունների մասին, սեպտեմբերի 14-ին հաղորդում եմ ներկայացրել գլխավոր դատախազություն» , - այս մասին լրագրողների հետ զրույցում, անդրադառնալով իր վարորդի կողմից կոռուպցիոն գործարքներ իրականացնելու հանգամանքին, ասաց արտաքին գործերի փոխնախարար Վահան Կոստանյանը:

«Նա աշխատանքից ազատվել է սեպտեմբերի 28-ին, բայց սեպտեմբերի 4-ից հետո ինձ չի սպասարկել: Ես վստահ եմ, որ թե՛ ես, թե՛ հանրությունը, կտեղեկանանք գործի վերաբերյալ», - ասաց նա:

Հարցին՝ ի՞նչ քայլեր է իրականացրել ԱԳՆ-ն՝ Բելգիայում Հայաստանի Հանրապետության դեսպան Տիգրան Բալայանին Ադրբեջանի դեսպանի կողմից հնչած սպառնալիքների ուղղությամբ, Կոստանյանն ասաց. «Մենք մեր գնահատականը տվել ենք, մեր նկատառումները գրավոր հայտնել ենք թե՛ դեսպանը ընկալ պետությանը, թե՛ այլ գործընկերներին: Թուրքիայի ազգային տոնին նվիրված միջոցառմանը Բալայանի մասնակցությունը եղել է մեզ հետ համաձայնեցված, կարծում ենք, որ դիվանագիտական շփումները տարբեր մակարդակներում, այդ թվում՝ դեսպանների մակարդակով, նորմալ պրակտիկա է, եղել է հրավեր, որն ընդունվել է»:

Փոխնախարարն ասաց, որ Թուրքիայի դեսպանն էլ մասնակցել է Հայաստանի Հանրապետության դեսպանատան կողմից կազմակերպված միջոցառումներին:

Խոսելով խաղաղության պայմանագրի շուրջ ընթացող բանակցություններից՝ Կոստանյանը նշեց, որ դեռեւս կան հարցեր, որոնք շարունակում են մնալ չհամաձայնեցված: Հարցերի համատեքստում նա նշեց, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հարցը չի հանդիսանում խաղաղության պայմանագրի մաս:

«Հայաստանի Հանրապետությունն Ադրբեջանի հետ չի խոսում Սահմանադրության փոփոխության մասին, ապառազմականացման վերաբերյալ քննարկում եւս չկա: Հայաստանի կողմից հնչել է մի քանի առաջարկ՝ վստահության ամրապնդման մեխանիզմների վերաբերյալ, այդ թվում՝ փոխադաձ վերահսկողության:

Բանակցություններն այս պահին ուղիղ են ընթանում, բայց Հարավային Կովկասում կան խաղաղությամբ ու կայունությամբ իրապես հետաքրքրված գործընկերներ, ովքեր փորձում են դրականորեն արձագանքել»,- ասաց նա:

ՄԻՐԶՈՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՀՈՒՆԳԱՐԻԱՅՈՒՄ

Նոյեմբերի 7-ին Բուդապեշտում աշխատանքային այցի շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը մասնակցել է Հունգարիայի արտաքին գործերի եւ առեւտրի նախարար Պետեր Սիյարտոյի կազմակերպած աշխատանքային նախաճաշին: Հանդիպումը տեղի է ունեցել Հունգարիայի մայրաքաղաքում անցկացվող Եվրոպական քաղաքական համայնքի հինգերորդ գագաթնաժողովի շրջանակներում:

Հանդիպման ընթացքում ՀՀ ԱԳ նախարարն անդրադարձել է տարածաշրջանային հարցերի: Նա ներկայացրել է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման գործընթացում վերջին զարգացումները, այդ թվում՝ երկու երկրների միջեւ սահմանազատման գործընթացի առնչությամբ, ինչպես նաեւ խաղաղության պայմանագրի կնքման ուղղությամբ ջանքերը:

Անդրադարձ է կատարվել տարածաշրջանային տնտեսական ու տրանսպորտային կապուղիների ապաշրջափակման հարցերի, այդ թվում՝ ՀՀ կառավարության կողմից մշակված «Խաղաղության խաչմերուկ» նախագծին՝ որպես տարածաշրջանային կայունության ապահովման կարեւոր գործոն:

ՎԱՐՈՒՅԹՆ ՈՒՂԱՐԿՎԵԼ Է ԴԱՏԱՐԱՆ

ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՎՐԵԺԽՆԴՐՈՒԹՅԱՆ ՇԱՐԺԱՌԻԹՈՎ

ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնում ավարտվել է Արմավիրի մարզի Ամբերդ գյուղի 59-ամյա բնակիչ Ա.Բ.-ի սպանության դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

2024թ. հունիսի 12-ին՝ ժամը 18:10-ին, «Էջմիածնի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունից հաղորդում է ստացվել այն մասին, որ Ամբերդ գյուղից «հրազենային վիրավորում» ախտորոշմամբ, անգիտակից վիճակում, բուժօգնության է տեղափոխել Արմավիրի մարզի Ամբերդ գյուղի 59-ամյա բնակիչ, ով նույն օրը՝ ժամը 18:25-ին, գիտակցության չգալով, մահացել է: Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության Վաղարշապատի քննչական բաժնում նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում քննիչների կողմից ձեռնարկված քննչական եւ վարութային գործողությունների արդյունքում պարզվել են դեպքի հանգամանքները, այդ թվում՝ շարժառիթը, ենթադրյալ հանցագործություն կատարած երկու անձանց ինքնությունը, ովքեր նույն գյուղի բնակիչներ են:

Քննչական խմբի քննիչների կողմից իրականացված ապացուցողական գործողություններով պարզվել է, որ դեպքին նախորդող ժամանակահատվածում համագյուղացիների միջեւ անձնական հարցի շուրջ ձեւավորվել են անբարյացակամ հարաբերություններ:

Քննությամբ փաստվել է, որ տուժողի համագյուղացի, 43-ամյա անձը տեղեկացել է, որ տուժողը եւ վերջինիս որդիներից մեկը վիճաբանել են, իր որդուն հարվածել են վեճի ժամանակ: Նպատակ ունենալով վրեժխնդիր լինել՝ նա որոշել է ապօրինաբար կյանքից զրկելու եղանակով հաշվեհարդար տեսնել Ա.Բ.-ից եւ նրա որդիներից:

Այդ նպատակով, 43-ամյա անձը իր մոտ ապօրինի պահվող հրազենով նույն օրը՝ ժամը 17:30-ի սահմաններում, ընկերոջ հետ նստել է իրեն պատկանող «Օպել Աստրա Ջի» մակնիշի ավտոմեքենայի վարորդի կողքի նստատեղին, իսկ ընկերն ավտոմեքենան վարել է գյուղի կենտրոնական փողոցով: Բանուկ հատվածում նկատելով տուժողի որդիներից մեկի՝ հանդիպակաց գոտով երթեւեկող ավտոմեքենան, այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով, անտեսելով շրջակայքում բնակելի տների առկայության հանգամանքը 43-ամյա անձը ընթացքի ժամանակ, ավտոմեքենայի սրահից հրազենով շուրջ հինգ կրակոց է արձակել տուժողի որդու ավտոմեքենայի ուղղությամբ, սակայն կրակոցները չեն դիպել նշանակետին, ինչի արդյունքում, իր կամքից անկախ հանգամանքներով, հանցանքն ավարտին չի կարողացել հասցնել:

Այնուամենայնիվ, նպատակադրվելով հանցավոր մտադրությունն ավարտին հասցնել՝ նա վերոհիշյալ ընկերոջ հետ շարունակել է երթեւեկությունը, ավտոմեքենան կայանել Ամբերդի միջնակարգ դպրոցի դիմաց: Այնտեղ նկատելով դեպի իր ուղղությամբ երթեւեկող Ա.Բ.-ի կողմից վարվող «Օպել Զաֆիրա» մակնիշի ավտոմեքենան, վերստին հաշվի չառնելով շրջակայքում ուսումնական հաստատության եւ բնակելի տների առկայությունը՝ դպրոցի եւ տների միջնամասում, այլ անձանց կյանքի համար վտանգավոր եղանակով, համագյուղացուն ապօրինաբար կյանքից զրկելու նպատակով նույն հրազենով շուրջ յոթ կրակոց է արձակել վերջինիս ուղղությամբ՝ պատճառելով կյանքի հետ անհամատեղելի հրազենային վիրավորումներ:

Այդ ընթացքում ընկերը, շարունակելով օժանդակել 43-ամյա անձին, ավտոմեքենան վարել ու կայանել է մոտակայքում՝ դպրոցի դիմաց, եւ սպասել ընկերոջը՝ վերջինիս հանցավոր մտադրությունն իրագործելուց անմիջապես հետո դեպքի վայրից նրա փախուստն անխոչընդոտ իրականացնելու նպատակով:

Դեպքից անմիջապես հետո 43-ամյա անձը, նստելով իրեն պատկանող, սակայն ընկերոջ կողմից վարվող ավտոմեքենան, դեպքի վայրից դիմել է փախուստի, իսկ ավտոմեքենան, թաքցնելու նպատակով, տեղափոխել, կայանել են Արմավիրի մարզում գտնվող ոռոգման ջրի ջրատարի հարակից դաշտում եւ դիմել են փախուստի:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա 43-ամյա տղամարդուն մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասով, 44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով եւ 155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, իսկ նրա ընկերոջը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով եւ 46-155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով: Դատարանի որոշմամբ՝ նրանց նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը:

Վերջիններիս մասով նախաքննություն ավարտվել է, եւ վարույթի նյութերը, մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատարան: Ապօրինի զենքի եւ դրա ձեռքբերման մասով նախաքննությունը շարունակվում է:

ՀՀ քննչական կոմիտե

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Հայաստանում իրականացվող դատաիրավական եւ հակակոռուպցիոն բարեփոխումների շրջանակներում ՀՀ քննչական կոմիտեի համակարգում ներդրվել է բարեվարքության ինստիտուտ:

Այս մասին հայտնում են Քննչական կոմիտեից, նշելով, որ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով եւ լրացումներով, որն ուժի մեջ է մտել 2024 թվականի օգոստոսի 5-ին, ամրագրվել է ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքության ստուգման պարտադիր պահանջ: Համաձայն դրա՝ բարեվարքության ստուգում են անցնում՝ ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք (քննիչները)՝ պաշտոնավարման վեցերորդ տարում, ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկվելուն հավակնող անձինք,

Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով անցկացված գրավոր քննության արդյունքով դրական գնահատական ստացած մասնակիցները՝ քննության բանավոր փուլից առաջ:

Ըստ այդմ՝ հոկտեմբերի 31-ի դրությամբ, ՀՀ քննչական կոմիտեի համակարգում բարեվարքության ընթացիկ ստուգում է անցել արդեն 22 անձ:

Ներկայում ընթանում է ինքնավար պաշտոն զբաղեցնող 74 անձանց, ինչպես նաեւ առաջխաղացման հավակնող եւս 23 ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքության ստուգումը:

Նոյեմբերին, ՀՀ քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակի համալրման նպատակով արդեն իսկ հայտարարված մրցութային հերթական փուլի շրջանակներում, գրավոր փուլի արդյունքներն ամփոփելուց հետո կստուգվի նաեւ գրավոր քննության արդյունքով դրական գնահատական ստացած մասնակիցների բարեվարքությունը:

«Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին. ՀՀ օրենքի կարգավորումների համաձայն՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության արդյունքով խորհրդատվական բնույթի բացասական եզրակացություն ներկայացվելու դեպքում պարտադիր հարուցվում է ծառայողական քննություն:

ՕՊԵՐԱՏԻՎ ԻՐԱՎԻՃԱԿ

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ նոյեմբերի 6-7-ը ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 97 դեպք, որոնցից 4-ը՝նախկինում կատարված:

Նախկինում կատարված հանցագործության դեպքերից բացահայտվել է անձնական ունեցվածքի գողության՝ 2, կողոպուտի եւ բնակարանային գողության՝ 1-ական դեպք: Հայտնաբերվել է 19 հետախուզվող, կամավոր ներկայացել՝2-ը:

Գրանցվել է զենք-զինամթերքի կամավոր հանձնման 2 դեպք:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՀՈՎԱՆԱՎՈՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԱԾ ՏՆՕՐԵՆԻՆ ԾԵԾԵԼ ԵՆ

Քրեական ոստիկանության գլխավոր վարչությունում ստացվել էին օպերատիվ տեղեկություններ, որ Երեւանի Աջափնյակ թաղամասում հաշվառված 40-ամյա տղամարդը մի խումբ անձանց հետ նոյեմբերի 1-ին՝ ժամը 19:00-ի սահմաններում, այցելել է մայրաքաղաքի Շիրակի փողոցում գործող սահմանափակ դատասխանատվությամբ մի ընկերության տարածք եւ տնօրենին առաջարկել ընկերության նկատմամբ հովանավորչություն իրականացնելու դիմաց իրենց տալ ամսական վարձատրություն:

Տնօրենը հրաժարվել է, ինչից հետո 40-ամյա տղամարդն ու հետը եկած անձինք ծեծի են ենթարկել նրան, աշխատասենյակի չիրկիզվող պահարանից հափշտակել երկուսուկես միլիոն դրամ եւ հեռացել:

Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով 40-ամյա տղամարդը ձերբակալվել եւ տեղափոխվել է Համայնքային ոստիկանության Շենգավիթի բաժին, ապա Երեւան քաղաքի քննչական վարչության Շենգավիթի քննչական բաժին:

Նախաձեռնվել է քրեական վարույթ՝ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ խոշոր չափերով ավազակության հատկանիշներով: 40-ամյա տղամարդուն առաջադրվել է մեղադրանք, դատարանի որոշմամբ նա կալանավորվել է: Պարզվել է նաեւ մյուս մասնակիցների ինքնությունը:

Ձեռնարկվում են միջոցառումներ՝ նրանց հայտնաբերելու եւ վարույթն իրականացնող մարմին ներկայացնելու ուղղությամբ:

Ծանուցում. Ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝նոյեմբերի 6-ից 7-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 97 դեպք, որից 4-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ՄՏԱՀՈԳԻՉ ԹՎԵՐ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում ենք ուղարկել՝ իմանալու, թե հոկտեմբերի 30-ի դրությամբ որքա՞ն աշնանացան ցորեն էր ցանվել Տավուշի մարզում, մարզի որ համայնքում՝ քանի հեկտար, եւ որքա՞ն է եղել դրա միջին բերքատվությունը: Մարզպետարանից պատասխանել են. «ՀՀ Տավուշի մարզում ըստ համայնքապետարանների կողմից ներկայացված օպերատիվ տեղեկատվությունների՝ 30.10.2024թ. դրությամբ կատարվել է 309,5 հա աշնանացան, որից՝ Բերդ համայնքում - 278,5 հա, Իջեւան համայնքում 31 հա: 2023թ. ցանվել է 2146 հա աշնանացան ցորեն, միջին բերքատվությունը, համայնքապետարանների կողմից ներկայացված օպերատիվ տեղեկատվությունների համաձայն, կազմել է 13,9 գ/հա»: Իշխանությունն այսպես է սահմանամերձ Տավուշի մարզում զարգացնում գյուղատնտեսությունը, նպաստում հացահատիկի ցանքերի աճին, ցորենի բերքատվության ավելացմանը:

ՓԱՇԻՆՅԱՆԻ ՔԱՎՈՐ ՄԱՐԶՊԵՏԸ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ՏՐԱՄԱԴՐԵԼ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշմամբ 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանին հոկտեմբերի 28-ին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝նրան առաջադրելով հետեւյալ հարցերը. «Կառավարությունը դադարեցրել է սահմանամերձ բնակավայրերում պետական աջակցությամբ, վարկավորմամբ բնակելի տների կառուցման ծրագիրը; Այդ ծրագրով Տավուշի մարզի սահմանամերձ ո՞ր բնակավայրում քանի՞ տուն է կառուցվել (կամ կառուցվում է), դրանցից քանիսի՞ կառուցման համար է տրվել 16 միլիոն դրամ, քանիսի՝ 21 միլիոն դրամ վարկ: Տավուշի մարզպետարանից ստացել ենք հետեւյալ պատասխանը. «Հարցի վերաբերյալ հայտնում ենք, որ պաշտոնական տեղեկություն չունենք, առաջարկում ենք դիմել համայնքապետարաններ»: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը ամեն կերպ գովազդում էր պետական աջակցությամբ, վարկավորմամբ սահմանամերձ բնակավայրերում տների կառուցման ծրագիրը, դժգոհում, որ Տավուշի մարզի սահմանամերձ որոշ գյուղերի բնակիչներ իրազեկ չեն, չեն օգտվում այդ ծրագրից, մինչդեռ նրա դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը կա՛մ անտեղյակ է, կա՛մ չի ցանկանում տեղեկություն տրամադրել այդ ծրագրով կառուցված տների թվի, աջակցության գումարի չափի մասին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՍԿԱՆԴԱԼԱՅԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

«ՆՈՐ ՁՈՎՔ»-Ի ԱՆՎԱՆ ԲԻԾԸ ՄԱՔՐՎԵ՞Ց «ԻՄ ՔԱՅԼԻ» ՃՆՈՒՀԻՎ

Սկանդալային իրադարձությունը «Նոր Ձովք» սուպերմարկետի սեփականատերերին մտերմացրեց իշխանությունների հետ:

Բանն այն է, որ 2023 թվականի մարտին բացահայտվել էր «Նոր Ձովք» ՍՊ ընկերությունում առերեւույթ հարկային չարաշահումներ կատարելու, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ իրացման շրջանառությունն առանձնապես խոշոր չափերով նվազ ցույց տալու միջոցով հարկային պարտավորությունները չկատարելու հանցավոր մեխանիզմի մի շարք էական հանգամանքներ:

Մասնավորապես՝ «Նոր Ձովք» ՍՊ ընկերության խանութների ցանցում ներդրվել է առեւտրային ծրագիր, որը համակցվել է թաքցված էլեկտրոնային սերվերային համակարգի:

«Նոր Ձովք» ՍՊԸ-ի խանութների ցանցում ներդրված այդ ծրագրի եւ էլեկտրոնային սերվերային համակարգի գործարկման արդյունքում «Նոր Ձովք» ՍՊ ընկերության իրացման իրական շրջանառությունը՝ վաճառված ապրանքների դիմաց փաստացի ստացված գումարը, իրական վաճառքների վերաբերյալ տեղեկությունը կուտակվել է էլեկտրոնային սերվերային համակարգում, իսկ կիրառված հանցավոր համակարգը քողարկելու նպատակով «Նոր Ձովք» ՍՊ ընկերության խանութների ցանցից առեւտուր իրականացնող գնորդներին տրամադրվել են արտաքին (առեւտրային) ծրագրի միջոցով գեներացված, փաստացի վճարված գումարներին համապատասխան կտրոններ:

2019-2023 թվականների ընթացքում ընկերության փաստացի իրացման շրջանառությունից հարկային մարմին ժամանակահատվածի վերաբերյալ հաշվարկ-հաշվետվություններում պակաս է ցույց տրվել իրացման շրջանառությունը, որի հետեւանքով չի հաշվարկվել եւ պետական բյուջե չի վճարվել 2 մլրդ 205 մլն ՀՀ դրամ ավելացված արժեքի հարկ եւ 1 մլրդ 921 մլն ՀՀ դրամ շահութահարկ:

Միլարդավոր դրամներ պետությանը չվճարած ընկերության ղեկավարը, որը նախկին իշխանության ներկայացուցիչ լինելով՝ թիրախավորվել էր ՔՊ-ականների կողմից, Աննա Հակոբյանի երեկույթին մասնակցելով՝ փորձել է «մաքրել» անվան բիծը:

Հոկտեմբերի 31-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի տիկնոջ՝ Աննա Հակոբյանի «Իմ քայլը» հիմնադրամի առաջին նվիրատուների շարքը պակաս կասկածելի եւ խնդրահարույց չէ, որքան ՔՊ կուսակցության դրամահավաքը:

Եթե ՔՊ կուսակցության դրամահավաքի նվիրատուները նվիրատվություն էին արել 1 մլն դրամ եւ ավելի, սակայն դրա մասին տեղյակ չէին եղել, ապա «Իմ քայլը» հիմնադրամի ընթրիքի նվիրատվությունը ակնհայտորեն արտոնությունների ակնկալիք կամ ներողամտության ակնկալիք էր, ինչպես «Նոր Ձովք»-ի դեպքում: Աննա Հակոբյանի հետ ընթրելու էր եկել նաեւ «Նոր Ձովք» սուպերմարկետների ցանցի փոխտնօրեն Ռաֆայել Խաչատրյանը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼՂ-ԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարության որոշմամբ՝ փոփոխություն է կատարվել 2023 թ. Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների օժանդակության ծրագրում:

Մինչ այս օժանդակության ծրագրի շահառու էին հանդիսանում միայն 2023 թվականի սեպտեմբերին տեղի ունեցած ռազմական գործողությունների արդյունքում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչները: Նոր փոփոխությամբ՝ 2020 թվականին տեղահանված մասնագետները եւս հնարավորություն կունենան համալրելու առկա թափուր հաստիքները՝ օգտվելով աջակցության ծրագրից:

2024 թվականի սեպտեմբերի 27-ի դրությամբ ծրագրի շահառու է հանդիսանում 404 ուսուցիչ, ուստի նոր շահառուների ավելացմամբ այլ մասնագետների եւս հնարավորություն կընձեռվի նախատեսված ծախսերի շրջանակում համալրելու մարզերի ուսումնական հաստատություններում առկա ուսուցչի թափուր տեղերը:

Նշենք, որ ծրագրի շահառու է հանդիսանում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանման հետեւանքով Հայաստանի Հանրապետությունում բնակություն հաստատած եւ «Հանրակրթության մասին» օրենքի պահանջներին համապատասխանող այն անձը, որը ցանկություն ունի աշխատելու ՀՀ մարզերի բնակավայրերի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում: Ըստ ծրագրի՝ հանրապետության բոլոր մարզերի դպրոցներում աշխատանքի անցնելիս ԼՂ-ից բռնի տեղահանված ուսուցիչները կստանան 30 տոկոս հավելավճար 2 տարվա ընթացքում, իսկ որոշ մարզերում՝ Սյունիքի, Վայոց ձորի հանրակրթական ուսումնական հաստատություններում, Գեղարքունիքի եւ Տավուշի մարզերի որոշ համայնքներում աշխատանքի անցնելու դեպքում 30 տոկոս հավելավճարից բացի կունենան նաեւ 50 հազար դրամ լրավճար:

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների աջակցության նպատակով ԿԳՄՍ նախարարությունը գործարկել է հարթակ. մարզերի դպրոցների թափուր աշխատատեղերը հրապարակված են https://kadrer.emis.am համակարգում, որտեղ գրանցվելով՝ նրանք կարող են գործուղման հայտ ներկայացնել:

ՀՀ ԿԳՄՍՆ Հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչություն

ՄՆԴԱԿԱՐԳՈՒՄ ՉՊԵՏՔ Է ԼԻՆԵՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԸՄՊԵԼԻՔՆԵՐ

Էներգետիկ ընպելիքները պարունակում են մեծ քանակությամբ կոֆեին, շաքար, նյութափոխանակության վրա ազդող խթանիչ նյութեր: Երեխաների սննդակարգում դրանք չպետք է տեղ ունենան, վստահեցնում է մանկաբույժ Մարինա Մելքումովան:

Էներգետիկ ըմպելիքների վնասակար ազդեցությունը՝

զարկերակային ճնշման բարձրացում,
սրտի աշխատանքի արագացում,
տագնապի զգացողություն, անհանգստություն,
քնի խանգարում, անքնություն,
ջրազրկում,
ծայրահեղ դեպքերում՝ մինչեւ սրտի ռիթմի խանգարում, երիկամների սուր անբավարարություն,
ցնցումներ:

Դպրոցահասակ երեխաների առողջության վարքագծի հետազոտության (2022թ.) տվյալներով՝ Հայաստանում դեռահասների 40%-ը շաբաթվա ընթացքում օգտագործում է էներգետիկ ըմպելիք:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 10 պատահար. 14 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

ԱՎՏՈՄԱՏ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏ

Հայաստանի Հանրապետությունը, լինելով Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) անդամ, միացել է ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման Միասնական հաշվետվողական ստանդարտին: Ստանդարտը ներդրած երկրների հարկային մարմինները, փոխադարձության սկզբունքով, ավտոմատ եղանակով տեղեկատվություն են փոխանակելու՝ ֆինանսական հաստատություններում ոչ ռեզիդենտների ֆինանսական հաշիվների վերաբերյալ:

Տեղեկատվության առաջին փոխանակումը 2025 թվականից է. Հայաստանը շուրջ 120 պետությունների եւ աշխարհագրական տարածքների հետ, տարեկան մեկ անգամ, փոխադարձության սկզբունքով իրականացնելու է ոչ ռեզիդենտների ֆինանսական հաշիվների վերաբերյալ ավտոմատ փոխանակում: ՀՀ ռեզիդենտ եւ ՀՀ-ում հաշվառված մշտական հաստատություն ունեցող ոչ ռեզիդենտ համարվող՝ ֆինանսական հաստատությունները, մինչեւ յուրաքանչյուր հարկային տարվան հաջորդող հարկային տարվա մայիսի 10-ը ներառյալ, էլեկտրոնային եղանակով հարկային մարմին կներկայացնեն օրենսդրությամբ սահմանված տեղեկատվությունը:

Միասնական հաշվետվողական ստանդարտի կիրարկմանն ընդառաջ՝ արդեն իսկ համապատասխան փոփոխություններ են կատարվել Հարկային օրենսգրքում: Հայաստանը միացել է նաեւ իրավական հիմք հանդիսացող միջազգային պայմանագրերին, մասնավորապես, «Հարկային հարցերով փոխադարձ վարչական աջակցության մասին» կոնվենցիային, ինչպես նաեւ «Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման մասին» իրավասու մարմինների միջեւ բազմակողմ համաձայնագրին, որով սահմանվում է նաեւ համաձայնագրին միացած այն երկրների ցանկը, որոնց հետ Հայաստանը պետք է իրականացնի նման փոխանակում: Միջազգային պայմանագրերը տեղադրված են ՊԵԿ պաշտոնական կայքի «Միջազգային համագործակցություն» բաժնի «Միջազգային հարկային պայմանագրեր» մասի «Այլ պայմանագրեր» ենթաբաժնում:

Կարեւորելով հարկային մարմինների միջեւ փոխանակվող տեղեկության գաղտնիության ապահովումը, Պետական եկամուտների կոմիտեն արդեն իսկ հաջողությամբ ներդրել է Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության տեղեկատվության անվտանգության կառավարման համակարգը (ISM): Միաժամանակ, կոմիտեն ակտիվ աշխատանքներ է իրականացնում տեղեկատվական տեխնոլոգիական հագեցվածությունն ապահովելու նպատակով, մասնավորապես, ՏՀԶԿ տվյալների փոխանցման հատուկ համակարգի (CTS) կիրառման ուղղությամբ:

ԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ՆԿԱՏՈՒՄ

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի բանկային համակարգում նկատվում են դրական փոփոխություններ: Այս մասին «Տարածաշրջանային մարտահրավերները եւ համագործակցության հնարավորությունները եվրոպական բանկերի հետ» թեմայով համաժողովում նոյեմբերի 7-ին ասել է ՀՀ ԿԲ նախագահ Մարտին Գալստյանը:

Նրա գնահատմամբ՝ ֆինանսական կայունության մասով վերջին տարիների ընթացքում հաջողվել է բարելավել բանկային համակարգի դիմադրողականությունը: Նա նշել է, որ ԿԲ քաղաքականությունն ուղղված է եղել անցած տարիների հաջողությունների ամրապնդմանը եւ ամրության պաշարի ձեւավորմանը ապագայի մարտահրավերների հաղթահարման համար: «Շահույթի մի մասը ուղղվել է կապիտալի հակացիկլիկ բուֆերի ձեւավորմանը, որը, ըստ վերջին որոշման, բարձրացվել է մինչեւ 1,75 տոկոս: Այսօրվա դրությամբ վարկային պորտֆելի չափը աճում է, ինչին նպաստում են տնային տնտեսությունների եւ շինարարական հատվածի վարկավորան բարձր ցուցանիշները»,- նշել է Գալստյանը: Նա ավելացրել է, որ բանկային համակարգում նկատվում է լիկվիդայնության մակարդակի բարձր աճ, ինչն ապահովում է դիմադրողականության բարձր մակարդակ:

ԿԲ նախագահը հավաստիացրել է, որ ՀՀ բանկային համակարգում տեղի են ունեցել լուրջ փոփոխություններ, դա հատկապես վերաբերում է ռիսկերի կառավարմանը եւ ֆունցկիայի համապատասխանությանը: Նրա գնահատմամբ՝ ներկա պահին դա բանկերի ամենակարեւոր գործառույթներից մեկն է: «Երեք տարվա ընթացքում աշխատակիցների թիվը ավելացել է մոտ երկու անգամ: ԿԲ-ն, իր հերթին, լուրջ ուշադրություն է հատկացնում ռիսկերի կառավարման բարձր մակարդակին եւ կոմերցիոն բանկերի համապատասխանությանը, քանի որ դա կարեւոր է երկիր անխափան ֆինանսական հոսքերի համար: Մենք կարեւորում ենք նաեւ բնապահպանական, սոցիալական եւ կորպորատիվ կառավարումը (ESG) եւ պատրաստվում ենք ստեղծել խաղի հստակ կանոնների ձեւավորման պայմաններ եւ պահանջներ ֆինանսական հատվածի համար»,- ընդգծել է նա:

Գալստյանը տեղեկացրել է, որ ԿԲ-ն շուտով կիրապարակի վերանայված ռազմավարությունը, որում կարեւոր դեր է հատկացված բնապահպանական, սոցիալական եւ կորպորատիվ կառավարմանը: «Բացի այդ, մենք կարեւորում ենք բանկերի կորպորատիվ կառավարման չափորոշիչների բարձրացումը, ինչը բանկային համակարգի կայունության եւ մրցունակության երաշխիքներից մեկն է երկարաժամկետ հեռանկարում»,- նշել է նա:

Գալստյանը նաեւ հայտնել է, որ մարտահրավերներն արագ փոխվող աշխարհում, հատկապես Հարավային Կովկասում, տարատեսակ են, եւ դրանք շատ արագ փոփոխվում են, ինչը պահանջում է ժամանակին տրվող արձագանք: «Այդ արձագանքը հասկանալի կլինի, եթե մարդիկ վստահեն մեզ: Վստահությունը մեր արժեքավոր ակտիվներից է, եւ մենք Կենտրոնական բանկում ձգտում ենք ամրապնդել այդ վստահությունը»,- նշել է ԿԲ նախագահը:

Է. Մ.

ՏՆՏԵՍԱԿԱՆ

«ԹԵԼ-ՍԵԼ»-Ի ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

«Թել-Սել» ընկերությունը հայտարարություն է տարածել, որում նշված է.

«Հարգելի՛ քաղաքացիներ,

Հաշվի առնելով վերջին օրերին Telcell Wallet-ի հետ կապված որոշ գործարքների ձգձգումը կամ չեղարկումը՝ տեղեկացնում ենք, որ նման խափանումները պայմանավորված են համակարգի գերծանրաբեռնված լինելու, բազմաթիվ հաճախորդների կողմից «Թել-Սել» ընկերության ծառայություններից օգտվելու հանգամանքով, ինչպես նաեւ որոշ գործընկերների համակարգերի խափանումներով:

Ներկա պահին Telcell համակարգը լիարժեք գործում է, եւ ամեն ինչ արվում է ընկերության ծառայությունների բնականոն աշխատանքն ապահովելու համար:

Ներողություն ենք խնդրում պատճառված անհարմարությունների համար:

Հիշեցնենք, որ Երեւանի քաղաքապետարանի որոշմամբ՝ նոյեմբերի 1-ից մայրաքաղաքի տրանսպորտային համակարգի բարեփոխումների եւ միասնական տոմսային համակարգի ներդրման համատեքստում հասարակական տրանսպորտից, մասնավորապես՝ MAN, ZhongTong եւ GazelCity մակնիշի փոխադրամիջոցներից օգտվելիս պարտադիր պայման է լինելու 100 դրամանոց մետաղադրամի առկայությունը կամ ավտոբուսներում եւ մայրաքաղաքի տարբեր վայրերում տեղադրված վճարային համակարգով QR կոդի միջոցով վճարում իրականացնելը»:

ՄԵՏԱՂԻ ՋԱՐԴՈՆԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ 6 ԱՄՍՈՎ ԱՐԳԵԼՎԵՑ

ՀՀ-ից մի շարք ապրանքների՝ դեպի ԵԱՏՄ երկրներ տեղափոխման եւ երրորդ երկրներ արտահանման ժամանակավոր արգելք է կիրառվել: Համապատասխան որոշումն ընդունվել է կառավարության երեկվա նիստում:

Հիմնավորման մեջ նշվում է, որ այս որոշման ընդունումը պայմանավորված է սեւ եւ գունավոր մետաղներից պատրաստված օգտագործված ապրանքների արտահանումը կանոնակարգելու, տեղական արտադրությունը զարգացնելու եւ հումքային բազայով ապահովելու, ինչպես նաեւ նոր ներդրումների միջոցով՝ Հայաստանի մշակող արդյունաբերության ոլորտի գործունեությունը խթանելու անհրաժեշտությամբ:

Վերջին տարիների փորձը ցույց է տվել՝ որպես հումք ներմուծվող սեւ եւ գունավոր մետաղների ջարդոնով կամ նախապատրաստվածքով աշխատելը տնտեսապես աննպատակահարմար է, քանի որ դրանց գները բարձր են: Դրա արդյունքում ներմուծված հումքով արտադրված վերջնական արտադրանքը բարձր ինքնարժեք ունի եւ նույնիսկ ներքին շուկայում դառնում է ոչ մրցունակ:

Բացի այդ, վերջին տարիներին ԵԱՏՄ ընդհանուր շուկայում ձեւավորված բարձր գների պատճառով նկատվում էին Հայաստանից սեւ եւ գունավոր մետաղների ջարդոնի ինտենսիվ արտահանման գործընթացներ: ԵԱՏՄ որոշ երկրներ նույնպես արգելել կամ սահմանափակել են սեւ եւ գունավոր մետաղների արտահանումը, այդ թվում՝ դեպի ԵԱՏՄ երկրներ:

Ըստ այդմ՝ որոշում կայացվեց ժամանակավորապես (6 ամիս ժամկետով) արգելել սեւ եւ գունավոր մետաղների ջարդոնի ու թափոնի, ինչպես նաեւ սեւ եւ գունավոր մետաղից պատրաստված օգտագործված որոշ ապրանքների արտահանումը:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՍԻԶԻՓՈՍԸ՝ ԱՆՋՈՐ ՈՒ ԸՄԲՈՍՏ

ԱԼԲԵՐ ԿԱՄՅՈՒ ԳՐՈՂՆ ՈՒ ՓԻԼԻՍՈՓԱՆ

Ի՞նչ մտքեր կարահայտեր կամ ի՞նչ որակումներ կտար ֆրանսիացի փիլիսոփա, գրող եւ լրագրող Ալբեր Կամյուն, եթե առրեր այս խառնիճաղանջ օրերում: Պատասխանն իհարկե հստակ տալ չենք կարող, սակայն վստահաբար կարող ենք ենթադրել, որ նոր փիլիսոփայական ուղղություն կստեղծվեր:

Նոյեմբերի 7 -ը Կամյուի ծննդյան օրն էր:

Ալբեր Կամյուի ստեղծագործությունները հզոր եւ ներթափանցող են, նրանք հաճախ խորանում են մարդկային գոյության եւ աշխարհի իմաստի էության ոլորաններ: Նրա «Օտարը», «Ժանտախտը», «Սիզիփոսի առասպելը» գրքերը ներկայացնում են հաճախ թվացող այն գաղափարը, որ կյանքը չունի հասանելի իմաստ, իսկ մարդը ստիպված է ինքնուրույն որոնել կամ ստեղծել այն սեփական կյանքում:

Կամյուն մեծ առաջնորդը եղավ առանձնահատուկ փիլիսոփայության, որը կոչվում է աբսուրդիզմ, եւ որի կենտրոնում է այն հարցը, թե ինչպես մարդն ապրի իմաստազուրկ աշխարհում: Նրա կերպարները հաճախ ստիպված են ընդունել կյանքի անհամապատասխանությունները եւ ընտրել ապրելը՝ առանց ապավինելու կրոնական կամ բարոյական «անբեկանելի չափանիշներին»: Կամյուի ստեղծագործությունների մեջ մարդկային ինքնաճանաչումը դառնում է պայքարի միջոց, իսկ ազատությունը եւ անհատականությունը՝ գոյության գլխավոր արժանիքները:

Կամյուի ստեղծագործությունները ոչ միայն ընդվզում են մեր օրերի կյանքի մասին, այլեւ կոչ՝ ըմբռնելու աշխարհի դաժանությունը եւ պայքարելու մեր ներսի ազատության համար: Դրանք բաց են թողնում ընթերցողին մտածելու կյանքի մեծ հարցերի շուրջ՝ առանց վերջնական պատասխաններ տալու:

«Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է գրողի ամենատպավորիչ մտքերն ու նրա կյանքի ուշարժան դրվագներից:

Ալբեր Կամյուի կյանքի հետաքրքիր դեպքերից մեկը Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում ֆրանսիական դիմադրության շարժման մեջ գրողի դերակատարության հետ է առնչվում: Կամյուն պատերազմի ժամանակ աշխատում էր որպես լրագրող, սակայն երբ նացիստական ուժերը գրավեցին Ֆրանսիան, նա միացավ դիմադրության շարժմանը: Դառնալով շարժման «Կոմբա» (Combat) անունով ընդհատակյա թերթի գլխավոր խմբագիրը՝ Կամյուն, կյանքը վտանգելու գնով, հրատարակում էր հոդվածներ, որոնք համարձակորեն քննադատում էին գերմանական օկուպացիան եւ կոչ էին անում դիմադրելու:

Կամյուի այս ժամանակաշրջանի աշխատանքը ոչ միայն գրական նշանակություն ունեցավ, այլեւ դարձավ նրա գաղափարների փորձաքարը: Նա պայքարեց ազատության, արդարության եւ մարդասիրության համար, ինչը հետագայում արտահայտվեց նրա փիլիսոփայական գրքերում: Հետաքրքրական է, որ նրա ստեղծագործությունները եւ հատկապես «Կոմբա»-ի հոդվածները բավականին մեծ ազդեցություն ունեցան ֆրանսիական հասարակական կարծիքի վրա՝ ոգեշնչելով մարդկանց մասնակցելու ազատագրական պայքարին:

Պատերազմից հետո Կամյուն շարունակում էր խոսել կյանքի արժեքի, արդարության ու ազատության մասին, ինչը նաեւ արտացոլվեց նրա հետպատերազմյան գրքերում: Այս տարիները Կամյուի կյանքում դարձան արժեքների եւ հավատամքների ձեւավորման կարեւոր շրջան, որը մեծ ազդեցություն ունեցավ նրա հետագա ստեղծագործական ուղու վրա:

Ներկայացնում ենք նաեւ գրողի հայտնի ու հատու մտքերը, որոնք մեծ ազդեցություն են թողել եւ թողնում շատերի աշխարհայացքի վրա: Ալբեր Կամյուի ձեւակերպումները կարող են յուրահատուկ բալասան դառնալ կյանքի ամենատարբեր իրավիճակներում, երբ թվում է, թե անելանելիությունից ելքեր չկան:

1. Մարդկային սիրտն անհեթեթ սովորություն ունի՝ ճակատագիր անվանելու միայն այն, ինչը կործանում է իրեն:

2. Դուք երբեք երջանիկ չեք լինի, եթե շարունակեք փնտրել, թե ինչ է երջանկությունը: Եվ դուք երբեք չեք ապրի, եթե շարունակեք փնտրել կյանքի իմաստը:

3. Երիտասարդ ժամանակ ես մարդկանցից պահանջում էի ավելին, քան նրանք կարող էին ինձ տալ՝ անդավաճան ընկերություն, հավատարիմ զգացմունքներ: Հիմա սովորել եմ նրանցից պահանջել ավելի քիչ, քան նրանք կարող են տալ՝ լինել կողքիս ու լռել: Եվ նրանց զգացմունքներին, ընկերությանը, շնորհակալ արարքներին ես միշտ նայում եմ որպես մի իսկական հրաշքի, որպես Աստծո պարգեւի:

4. Անխուսափելի է միայն մեկ բան՝ մահը, մնացած ամեն ինչից կարելի է խուսափել: Այն ժամանակահատվածում, որն ընկած է մեր ծննդյան եւ մահվան միջեւ, ոչինչ կանխորոշված չէ. ամեն ինչ կարելի է փոխել, կարելի է նույնիսկ դադարեցնել պատերազմները եւ ապրել խաղաղության մեջ, միայն թե ցանկանալ այնպես, ինչպես հարկն է՝ բավականաչափ ուժեղ եւ երկար:

5. Սիզիփոսը, վերադառնալով դեպի իր քարը, տարվում է ճակատագիր դարձած անկապ դեպքերի հաջորդականությամբ, որ ինքն է ստեղծել, ի մի բերել հիշողությամբ, ամրապնդել մոտակա մահով: Ես թողնում եմ Սիզիփոսին լեռան ստորոտում: Ամեն մարդ ունի իր ժայռը: Բայց Սիզիփոսը սովորեցնում է գերագույն հավատարմություն, որը ժխտում է աստվածներին ու ժայռեր է բարձրացնում....

Ահա այսպես անզուգական ներաշխարհով Կամյուն մինչ օրս էլ կարողանում է փոթորկել ընթերցողի հոգին, օգնում է ընդունել նրա ներսի ու դրսի «մարդուն» այնպես, ինչպես կա՝ այդպիսով ապրելով նաեւ ամեն ընթերցողի սրտում որպեսմի անջնջելի «Ընդվզող մարդ»:

ԱՆՆԱ ՄՐԱՊԻՈՆՅԱՆ

«ԲԱԺԱՆՈՒՄ ՉԻ ԼԻՆՈՒՄ»

ՈՎՔԵՐ ԵՆ ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԵՐԳԻ ԵՐԳԻՉՆԵՐԸ

Այսօր Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի է ունենալու երգիչ Արա Մարտիրոսյանին նվիրված համերգ՝ «Բաժանում չի լինում» խորագրով:

Երգչի սիրված երգերով հանդես են գալու իր ընկերները՝ Ռազմիկ Ամյանը, Սիրուշոն, Սարո Թովմասյանը, Արկադի Դումիկյանը, Արամ MP3-ն, Կարեն Սեւակը, Սոնան, Սոնա Ռուբենյանը, Իվետա Մուկուչյանը, Սոֆի Մխեյանը, Եզակյան Գագիկը, Անաստասիա Բրուխտին, Ավո Խալաթյանը, Մաշա Մնջոյանը, Սյուզանա Մելքոնյանը, Ալեքսանդր Շոուան, Ժան Միլիմերովը եւ Էթերի Բերիաշվիլին: Երգչուհիներ Սիրուշոն, Սոնա Ռուբինյանը եւ Հռիփսիմե Հակոբյանը իրենց ինստագրամյան էջում կիսվել են տեսանյութերով, որտեղ իրենց հետեւորդներն ներկայացրել են փորձերի ընթացքը: Երգչուհի Սոնա Ռուբենյանը հանդես է գալու «Մի գնա» երգով, Հռիփսիմե Հակոբյանը՝ «Հերիք է սիրտ» երգով, Սիրուշոն՝ «Բաժանում չի լինում» երգով:

Հիշեցնենք, որ 2023 թվականի դեկտեմբերի 15-ին՝ 46 տարեկանում, կյանքից հեռացավ երգիչ Արա Մարտիրոսյանը, երգչի մահվան պատճառը սրտի կանգն էր:

ԷՄՄԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՄԱՐԶԱԿԱՆ

ԱԼԵՔՍ ՍԱՀԱԿՅԱՆԸ ԵՎ ՍՈՆԱ ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆԸ ԱՌԱՋԱՏԱՐՆԵՐԻՑ ԵՆ

Ավարտվել է Շախմատի աշխարհի մինչեւ 18 տարեկան պատանիների եւ աղջիկների առաջնության 7-րդ խաղափուլը:

Ինչպես հաղորդում են Հայաստանի Շախմատի ֆեդերացիայից, մինչեւ 18 տարեկանների խմբում առաջատարների շարքում է Ալեքս Սահակյանը, ով 7 հնարավորից ունի 5.5 միավոր:

Նույն տարիքային խմբում Արսեն Դավթյանը ունի 4 միավոր:

Մինչեւ 14 տարեկան աղջիկների խմբում առաջատարների շարքում է Սոնա Կրկյաշարյանը, ով ունի 5 միավոր:

Մինչեւ 14 տարեկան պատանիների խմբում Գոռ Ասկանազյանը ունի 3 միավոր:

«ԷԺԱՆԱԳԻՆ ՄԱՆԻՊՈՒԼՅԱՑԻԱՆԵՐ». «ՖՅՈՒՆԻԿ»-Ի ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

«Ֆյունիկ» ՖԱ-ն վրդովված է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի փոխնախագահ Արմեն Նիկողոսյանի՝ Fast Sports-ի եթերում մեր ակումբի հասցեին հնչեցված վիրավորանքների ու ստերի հերթական տարափից, դրանք որեւէ առնչություն չունեն իրականության հետ, ասվում է ակումբի հայտարարությունում:

«Սա հերթական անգամ ապացուցում է, որ Արմեն Նիկողոսյանն այն աստիճան է ցածրացել ու հուսալքվել, որ դիմում է էժանագին մանիպուլյացիաների ու կեղծիքի՝ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի ղեկավարության վարկաբեկված հեղինակությունը վերականգնելու եւ ուրիշներին նսեմացնելու համար:

Անթույլատրելի ենք համարում Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի ներկայացուցչի նման պահվածքը, որը, նախ եւ առաջ, արատավորում է ամբողջ հայկական ֆուտբոլի իմիջը: Կոչ ենք անում Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի փոխնախագահին կենտրոնանալ իր անմիջական պարտականությունների վրա, որոնց անբարեխիղճ կատարումն արդեն իսկ հանգեցրել է հայկական ֆուտբոլում չտեսնված աղետալի վիճակի:

Մենք վերահաստատում ենք համերաշխություն հայկական ֆուտբոլի բոլոր երկրպագուական շարժումներին եւ պահանջում Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի գործող ղեկավարության անհապաղ հրաժարականը»,- ասվում է հայտարարությունում:

● *Նոյեմբերի 28-ին՝ ժամը 15:00-ին, Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում կցուցադրվի «Խենթը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1.000-3.000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ֆիզիկական անձը փոստային առաքմամբ ներմուծել է ապրանքներ, որոնց մաքսային արժեքը կազմել է 250000 դրամ: Ի՞նչ չափով մաքսային վճարներ պետք է անձը վճարի:

Կարապետ Ղուկասյան (37 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 249-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ Միության անդամ չհանդիսացող պետությունից ֆիզիկական անձանց կողմից միջազգային փոստային կամ սուրհանդակային առաքումներով ՀՀ տարածք ներմուծվող ապրանքների համար վճարվում են միասնական մաքսային վճարներ (բացառությամբ մաքսավճարի) 22.5 տոկոս, եթե մեկ ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների ընդհանուր քաշը չի գերազանցում 30 կիլոգրամը, իսկ մաքսային արժեքը գերազանցում է 200 հազար դրամը, սակայն չի գերազանցում 1000 եվրոյին համարժեք ՀՀ դրամը: Ընդ որում՝ սահմանված միասնական դրույքաչափերով մաքսային վճարները հաշվարկվում են ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի եւ սույն մասի 1-ին կետով սահմանված մաքսային արժեքի (200 հազար դրամ) դրական տարբերության նկատմամբ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Միության մաքսային սահմանով ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշվում է «Մաքսային միության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու մասին» 2008 թվականի հունվարի 25-ի համաձայնագրին համապատասխան, եւ Մաքսային միության Մաքսային օրենսգրքի 183-րդ հոդվածի համաձայն՝ մաքսային հայտարարագիր ներկայացնելուն զուգահեռ մաքսային մարմին են ներկայացվում փաստաթղթեր, որոնց հիման վրա լրացվել է մաքսային հայտարարագիրը, այդ թվում՝ ապրանքների հայտագրված մաքսային արժեքը եւ ապրանքների մաքսային արժեքի սահմանման ընտրված մեթոդը հաստատող փաստաթղթերը:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ արտոնություններ ունեն Հայրենական մեծ պատերազմի հաշմանդամություն ունեցող անձինք:

Հասմիկ Մուրադյան (69 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Բնակարանային վարձի, աղբահանության, հեռախոսի վարձերը 50 տոկոս զեղչով վճարելու, պետպատվերի շրջանակում բուժօգնություն ստանալու /այդ թվում՝ դեղորայք/, պրոթեզաօրթոպեդիկ եւ վերականգնողական պարագաներ անվճար ստանալու, ԱՊՀ երկրների տարածքում տարին մեկ անգամ արտոնյալ պայմաններով երթեւեկելու:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայրենական մեծ պատերազմի վետերանների համար սահմանված արտոնություններից կարող են օգտվել այլ պետություններում մարտական գործողությունների մասնակիցները եւ նախկին խորհրդային բանակում զինվորական պարտականությունները կատարելիս հաշմանդամություն ձեռք բերած անձինք:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ ArmLur.am-ի

Երեկ՝ երեկոյան, տեղի ունեցավ Երեւանի «Նորաձեւության շաբաթվա» բացման արարողությունը. այն կայացավ Բռնադատվածների հուշահամալիրում, որի դռները հազվադեպ են բացվում, այս մասին հայտնեց Տիգրան Ավինյանը:

ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի դեսպանն իր ելույթի խոսքում նշեց, որ այս շաբաթը հայկական տաղանդի դինամիկ զարգացման խորհրդանիշն է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	0 - 4 + 8 + 12
Կոտայքի լեռներ	-1 - 5 + 7 + 11
Կոտայքի նախալեռներ	0 + 2 +13 + 15
Գեղարքունիք	0 - 5 + 6 + 11
Լոռի	-1 - 5 +10 + 13
Տավուշ	- 2 + 3 +12 + 15
Արագածոտնի լեռներ	0 - 3 + 7 + 11
Արագածոտնի նախալեռներ	-1 + 3 +11 + 15

Արարատ	0 + 3 +17 + 19
Արմավիր	-1 + 2 +17 + 19
Վայոց ձորի լեռներ	-2 - 5 + 9 + 11
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +17 + 19
Սյունիքի հովիտներ	+ 3 + 7 +16 + 19
Սյունիքի նախալեռներ	0 - 2 + 9 + 12
ԼՂՀ	0 - 4 + 9 + 13
Երեւան	+ 6 + 8 + 16 + 18

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **7.11.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*